

ԵՐԱԿՐՈՆԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայրապետական մաղթանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Նոյեմբերի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 18-րդ տարեդարձի առիթով Պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք:

Սրբազան արարողություններին ներկա

էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ, միաբաններ եւ բարեպաշտ հայորդիներ:

Մայր տաճարում Պատարագ մատուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարապետ Հովնան եպս Հակոբյանը:

Ս. Պատարագի վերջում Ավագ խորանին, հանդիսապետությամբ Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Ոսկան արք. Գալվաքյանի, տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք: Ներկաներն աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Ամենայն Հայոց Հայրապետության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անասանության ու պայծառության, ինչպես նաեւ Նորին Սրբության քաջառողջության, կենաց արեւշատության եւ բազմամյա գահակալության համար:

Հայրապետական մաղթանքի սկզբում, Հայ Եկեղեցու եկեղեցականաց եւ աշխարհականաց դասի անունից շնորհավորելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ գահակալության տարեդարձի առիթով, Ոսկան սրբազանն անդրադարձավ Մայր Աթոռի կարեւոր դերակատարությանը Հայ Եկեղեցու միասնականության պահպանման գործում:



Սրբազան հայրը նշեց նաեւ, որ այսօր էլ Հայ Եկեղեցու առաքելաշավիղ գահակալը շարունակում է իր հայրապետական սերը, խնամքը եւ հոգածությունը տարածել հայ ժողովրդի հոգեւոր կյանքում:

Վերջում սրբազան հայրը մաղթեց, որ Ամենայն Հայոց Հովվապետը մշտապես ծաղկյալ պահի Թաղեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների ու Գրիգոր Լուսավորչի Աթոռը: Արարողությունն ավարտվեց Պահպանիչ աղոթքով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ

Հոկտեմբերի 25-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի առիթով հովվապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ իրավերով թեմակալ առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի եւ թեմական խորհրդի:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Գեորգյանի հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը, Հայրապետի գավազանակիր Աղան արք. Երնջակյանը, Կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Ադամ քհն. Մակարյանը եւ Մայր Աթոռի բարերար տիար Գաբրիել Զեմբերյանը:

Հոկտեմբերի 26-ի առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց «Վաչե Մանուկյան» դպրոց եւ հանդիպեց աշակերտության հետ:

Հայրապետական պատվիրակությանը Միացյալ Նահանգներում միացել էին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս Հովակիմյանը, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի Էկումենիկ կապերի պատասխանատու եւ թեմական նվիրակ Վիգեն արք. Այբազյանը: Հանդիպմանը ներկա էին նաեւ բարերարներ տեր եւ տիկին՝ Վաչե եւ Թամար Մանուկյանները, ՀԲԸՄ-ի Նախագահ տիար Պերճ Սեդրակյանը եւ հավատացյալ այլ հայորդիներ:

Աշակերտները Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Հայրապետական մաղթանքի երգեցողությամբ: Խոսք ասվեց ուսուցիչների անունից, կրթական հաստատության սաները հանդես եկան գեղարվեստական կատարումներով: Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունն ու մաղթանքները փոխանցեց սաներին ու մանկավարժներին եւ դպրոցին նվիրեց խաչքարի մանրակերտ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց «Արարատ տուն», որտեղ խնամք է մատուցվում հայ տարեցներին: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց հաստատության խնամակալ մարմնին, աշխատակիցներին, հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքներ բերեց տարեցներին:

Հայոց Հայրապետը խնամատար հաստատությանը նվիրաբերեց Վարդգես Սուրենյանցի «Տիրամայր» սրբապատկերի կրկնօրինակը: Այնուհետ Նորին Սրբության ձեռամբ կատարվեց «Արարատ տան» Նոր մասնաշենքի հուշաքարի օրհնության արարողությունը:

Երեկոյան Սրբոց Դեոնոյանց առաջնորդանիստ մայր եկեղեցում տեղի ունեցավ Հրաշափառի արարողություն՝ ներկայությամբ թեմի հոգեւոր դասի եւ բազմաթիվ հավատացյալների, քույր Եկեղեցիների ներկայացուցիչների եւ պետական այրերի:

Հավատավոր ժողովրդին ուղղված խոսքում Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները բերեց թեմի հաստատման 90-ամյակի առիթով՝ գնահատելով ամերիկահայության ձեռքբերումներն ու հաջողությունները համայնքի ազգային-եկեղեցական կյանքում:

Շարունակությունը՝ Էջ 2



Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ



Սկիզբը՝ էջ 1

Յուկտեմբերի 27-ի առավոտյան ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ շաբաթօրյա եւ կիրակնօրյա դպրոցների, ինչպէս նաեւ հայ վարժարանների աշակերտների հետ:

Հայրորդները Վեհափառ Հայրապետին դիմավորեցին խանդավառությամբ, ծափողջույններով եւ Հայրապետական մաղանքի երգեցողությամբ: Ողջույնի խոսքից հետո կրթական հաստատությունների ուսուցիչները եւ սանե-

լու ազգային-եկեղեցական կյանքը: Այսօր այս հանդիպման ընթացքում Մենք խնդրեցինք տեսանք, թե որքան քաջ եք դուք մայրենի լեզվի իմացության մեջ, որքան սիրում եք Սուրբ Էջմիածինն ու Հայաստանը, թեպետե՛ք հեռու եք հայրենիքից: Ձեր սիրելի ծնողները, ձեր պատվական մանկավարժները խնամում ու դաստիարակում են ձեզ այն լուսավոր տեսիլքով, որ դուք մարմնավորելու եք մեր ժողովրդի նվիրական իրաւունքը: Լավ տոկոսե՛ք, աճե՛ք ու զորացե՛ք գիտելիքներով եւ իմացությամբ: Ձեր հոգիներում վառ պահե՛ք սերը Աստծու հանդէպ, հետե-

լիքների համար: Գարեգին Բ Կաթողիկոսը նաեւ մաղթեց, որ Տերը հանապազ պահպան լինի բոլոր դպրոցների պատասխանատուներին ու մանկավարժներին՝ պայծառ պահելու հայկական կրթօջախները՝ հանուն ազգային եւ հոգեւոր կյանքի զորության, մեր ժողովրդի բարի հույսերի եւ լուսավոր գալիքի:

Նորին Սրբությունը պատասխանեց աշակերտների տրած հարցերին: Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը նվերներ փոխանցեց դպրոցներին ու վարժարաններին:

Յուկտեմբերի 28-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբոց Ղեւոնդյանց մայր եկեղեցու հանդիսությունների սրահում հանդիպում ունեցավ շաբաթօրյա դպրոցների աշակերտության հետ: Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքի երգեցողությամբ: Բացման խոսք ասաց «Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրյա դպրոցի տնօրէն Յովհաննէս սրկ. Գումրույանը: Դպրոցների սաները հանդես եկան երգեցողությամբ, դաշնամուրային կատարումներով: Երեւանից ժամանած Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի սաները, ովքեր ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի միջոցառումները զարդարեցին իրենց եւ հայ կոմպոզիտորների հեղինակած երգերով: Այնուհետեւ առանձին երգացանկով հանդես եկան թրքամեծի ընծայարանի շրջանավարտ, Գետրոյան հոգեւոր ճեմարանի ուսանողները: Հանդիպման գեղարվեստական մասից հետո խոսք ասաց ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Յովհաննէս արք. Տերտերյանը՝ գնահատելով հայ դպրոցների առաքելությունը, կարեւորելով հայության շունչն ու ոգին արթուն պահելը, հորդորելով ամուր պահել սերը հանդէպ մայր հայրենիքը եւ Սուրբ Էջմիածինը: Այնուհետ սրբազան հոր առաջնորդությամբ դպրոցների աշակերտները միասնաբար իրենց ուխտը բարձրաձայնեցին՝ հավատարիմ մնալու մեր հայրերի հավատքին, սիրելու Հայաստանը, հավատարիմ մնալու Սուրբ Էջմիածինն, սիրելու եւ պահպանելու հայոց լեզուն: Ապա երեխաները երգեցին Հայրապետական մաղանքը:

Հանդիպման ավարտին օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ երեխաների անմեղ սրտերից բխած աղոթքը Աստված պիտի լսի եւ քաղցրությամբ պիտի ընդունի հայրենիքին, Եկեղեցուն եւ Սուրբ Էջմիածինն հավատարմության ուխտը՝ օրհնություններ հղելով նրանց կյանքին, որպեսզի ապրեն երջանիկ, ծնողների, մեր ժողովրդի եւ հայրենիքի սիրու մեջ: Նորին Սրբությունը քանքարների ավետարանական առակի օրինակով



եւ խորհրդով պատգամ բերեց՝ Աստծուց ստացված շնորհները լավագույնս օգտագործելու, հայոց մեծերի պէս դառնալու ազգի արժանավոր զավակներ: Վեհափառ Հայրապետը գնահատանք հայտնեց դպրոցների պատասխանատուներին ու մանկավարժներին, ծնողներին, հոգեւոր սպասավորներին՝ Նոր սերնդի կրթության ու դաստիարակության գործում իրականացվող առաքելության համար:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ նաեւ թեմի երիտասարդների

արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոնդյանց առաջնորդանիստ մայր եկեղեցում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մատուցեց Պատարագ:

Բարեպաշտ ժողովրդին ուղղված իր քարոզում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ օրվա խորհրդին, խաչի նշանակությա-



նոր շնորհավորեցին Վեհափառ Հայրապետին՝ գահակալության 18-րդ տարեդարձի առիթով եւ հուշանվերներ հանձնեցին:

Կրթական հաստատությունների սաները հանդես եկան գեղարվեստական կատարումներով, հայրենասիրական երգ ու պարով: Այնուհետեւ Հայոց Հայրապետն իր օրհնությունը, բարեմաղթանքները եւ եկեղեցասիրության, ազգասիրության ու հայրենասնվիրումի հորդորները փոխանցեց աշակերտներին, ուսուցչական կազմին, ներկա հավատացյալներին:

Մանուկներին ու պատանիներին ուղղված խոսքում Նորին Սրբությունն ի մասնավորի ասաց. «Հայաստանը, Սուրբ Էջմիածինը դուք եք, սիրելիներ, ձեզնով է հզորանալու հայրենիքը, շենսա-

լեք Տիրոջ պատվիրաններին, եղեք նախանձախնդիր ու պատասխանատու զավակներ ձեր ծնողների, մեր Եկեղեցու ու ազգի համար: Հորդորում ենք նաեւ, որ այցելեք հայրենիք, Սուրբ Էջմիածին, ձեր աչքերով տեսնեք մեր նախնայաց հիշատակները եւ ձեր սրտով զգաք նրանց պատգամը հավատքի ու հայրենասիրության: Մենք հանապազ աղոթում ենք ձեզ համար՝ հայցելով, որ Փրկիչ մեր Տերը պահպանի Իր Աջի հովանու ներքո օրինի ու շնորհագարդի ձեզ, որպեսզի ուշիմ մտքով ու պայծառ հոգով աճեք ու կատարելագործվեք եւ ձեր ավանդը բերեք ազգային ու հայրենական մեր կյանքին»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն Աստծու օրհնությունը հայցեց պատանիների եւ նրանց ընտա-




հետ: Նորին Սրբությունը պատասխանեց երիտասարդներին հուզող տարբեր հարցերին եւ հորդորեց նրանց ապրել հավատավոր կյանքով, միշտ սիրել մեր Սուրբ Եկեղեցին ու հայրենիքը, լինել ազգի արժանավոր զավակներ: Վեհափառ Հայրապետը մեծապէս կարեւորեց Նոր նախաձեռնություններով երիտասարդներին Եկեղեցու առաքելության մեջ առավել ներգրավումը եւ ամերիկահայ երիտասարդների հայրենիք ուխտագնացությունները՝ հաղորդ դառնալու նախնայաց հիշատակներին, հայրենական մեր սրբություններին, առավել զորանալու հավատքի ու հայրենասիրության մեջ:

Յուկտեմբերի 29-ին՝ Սուրբ խաչի գյուտի տոնի օրը, ԱՄՆ հայոց

նր մեր ժողովրդի անցյալում եւ ներկայում, ամերիկահայության կյանքում: Նորին Սրբությունն իր խոսքում ի մասնավորի ասաց. «Տիրոջ խաչը պատմության բոլոր ժամանակներում մեր ժողովրդի համար եղավ նվիրական նշան, որի զորությանն ապավինած ապրեցինք ու արարեցինք, դիմագրավեցինք փորձություններն ու նեղությունները: Խաչը մեզ համար եղավ գիր ու մշակույթ, եղավ զենք, երբ ուզեցին մեզ կործանել, եղավ դժվարությունները հաղթահարելու ուժ եւ վերածնվելու զորություն: Խաչով վերապրեցինք ցեղասպանությունը եւ հարուցյալ մեր Նոր կյանքը կերտեցինք հայրենայաց հողում ու աշխարհի տարբեր կողմերում:

Շարունակությունը՝ էջ 4



«Միջմշակութային եւ միջկրոնական երկխոսություն. կրոնական թանգարանների առաքելությունը» կոնֆերանսը Մայր Աթոռում

Հոկտեմբերի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, օրինությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների ջանքերով՝ համագործակցությամբ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի եւ ԵՀԽ-ի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի, իր աշխատանքն սկսեց «Միջմշակութային եւ միջկրոնական երկխոսություն. կրոնական թանգարանների առաքելությունը» խորագրով միջազգային կոնֆերանսը:

Կոնֆերանսը կազմակերպվել էր ի նպաստ ամբողջ աշխարհում եւ հատկապես Մերձավոր Արեւելքում, կովկասյան ու անդրկովկասյան տարածաշրջանում խաղաղության հաստատման: Կոնֆերանսի կազմակերպումը նպատակ էր հետապնդում, առաջին անգամը լինելով, ի մի ժողովել կրոնական մշակույթները ներկայացնող թանգարանները, որպեսզի որոշ թեմաների

գետներ Հայաստանից, Ռուսաստանից, Իտալիայից, Իրանից եւ Ֆինլանդիայից:

Համաժողովը բացվեց Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ քին. Կարապետյանի խոսքով: Տեր հայրը տեղեկացրեց, որ մինչ օրս որեւէ վայրում, որեւէ հաստատության հովանու ներքո ի մի չեն ժողովվել կրոնական թանգարանները, ավելին. որեւէ կերպ լսելի չէ նրանց հավաքական ծայրը: Անդրադառնալով կրոնական թանգարանների առաքելությանը՝ նա մասնավորապես նշեց. «...Կրոնական թանգարանները, մեր խորին համոզմամբ, հենց այն հոգեղեն աղբյուրներն են, որոնց աստվածային ջուրը հոսելով գալիս լցվում է մարմինների մեջ՝ կատարելագործելով, ձեւավորելով մարդկային անձը: Եվ այսպես մարդը ճանաչում է իր աստվածային ծագումն ու կոչումը, գիտակցում, որ «ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգևը կատարելաբար ի վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ», որով եւ իր անձնական նպաստն է բերում

տնօրեն դոկտոր Թոմաս Ծրապետ, ԵՀԽ-ի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը եւ Թանգարանների միջազգային կոմիտեի՝ ԻԿՕՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեի նախագահ Անի Ավագյանը:

Կոնֆերանսի առաջին օրը զեկույցներով հանդես եկան ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչության պետ Վարդան Ասատրյանը («Կրոնների առաքելությունն անցյալում եւ այսօր»), Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու թանգարանի տնօրեն Թերեզա Թոնսը («Սանդուխդ դեպի սրբություն. թանգարան, որ ունի հոգի»), Սերգիեյ Պոսադի պատմության եւ արվեստի պետական արգելոց-թանգարանի փոխտնօրեն Սվետլանա Նիկոլաեւան («Թանգարանային ցուցահանդեսներն ու ցուցադրությունները որպես հասարակության մեջ պատմական եւ մշակութային փոխհարաբերությունների բազմազանություն: Սերգիեյ Պոսադի պատմության եւ արվեստի պետական արգելոց-թանգարանի փորձը»), Իտալիայի եպիսկոպոսական ժողովի եկեղեցական-մշակութային ժառանգության ազգային գրասենյակի տնօրեն Վալերիո Պենասսոն («Եկեղեցական թանգարանը միջնորդության եւ փոխհարաբերությունների մշակութային գործիք է: Իտալիայի եկեղեցիների ժառանգության արժեւորումը»), ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակութային կցորդ Մոհամադ Ռեզա Հեյդարին («Թանգարանների ցուցահանդեսները որպես ազգերի միջեւ խաղաղության հաստատման միջոց») եւ Սանկտ Պետերբուրգի աստվածաբանության ակադեմիայի եկեղեցա-հնագիտական թանգարանի տնօրեն Ելենա Նիկոլաեւան («Սանկտ Պետերբուրգի աստվածաբանական ակադեմիայի եկեղեցա-հնագիտական թանգարան. ծագման պատմություն եւ զարգացման հեռանկարներ»):

Օրվա նիստերից հետո կոնֆերանսի մասնակիցներն այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ, մասնակցեցին Մայր Աթոռի «Ռուբեն Սեւակ» թանգարանում կազմակերպված «Նոր անուններ» պատասխան երաժիշտ-կատարողների համերգին:

Կոնֆերանսը շարունակվեց նաեւ հոկտեմբերի 31-ին:

Երկու նիստերի ընթացքում ներկայացվեցին հետեւյալ զեկույցները. «Կրոնական մշակույթի աշակցությունը միջազգային խաղաղության եւ հանդուրժողականության հաստատման գործում» (Հայաստանում հրեական համայնքի դեկավար Ռիմա Վարժապետյան Ֆելեր), «Կրոնական պատմության պետական թանգարանը որպես տարբեր կրոնական ուղղությունների երկխոսության հարթակ» (Սանկտ Պետերբուրգի կրոնական պատմության պետական թանգարանի ուղղափառության բաժնի ղեկավար Սվետլանա Նիկոլաեւա) եւ «Քրիստոսի չարչարանների պատմությունները հայկական պատկերագրության մեջ: Քրիստոսաբանական թեմայի զարգացումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի զանգեղում» (Հռոմի համալսարանից Ռաչելե Զանոնե):

Մայր Աթոռում տեղի ունեցավ «Տարածաշրջանային խաղաղություն. իրողություններ եւ հեռանկարներ» միջազգային համաժողովը



Հոկտեմբերի 31-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, օրինությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ նախաձեռնությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի, տեղի ունեցավ «Տարածաշրջանային խաղաղություն. իրողություններ եւ հեռանկարներ» խորագրով միջազգային համաժողովը:

Տարածաշրջանում խաղաղության հաստատման ուղիների որոնմանը նվիրված համաժողովը վարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն, «Կլոր սեղանի» հոգաբարձուների խորհրդի անդամ Վահրամ քին. Մելիքյանը, «Կլոր սեղան» հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանն ու «Ինտեգրացիա եւ զարգացում» հասարակական կազմակերպության նախագահ, քաղաքական վերլուծաբան Արամ Սաֆարյանը:

Համաժողովին մասնակցում էին հասարակական գործիչներ, վերլուծաբաններ, լրագրողներ, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ Ռուսաստանից, Վրաստանից, Թուրքիայից եւ Իրանից:

Համաժողովը բացվեց Վահրամ քին. Մելիքյանի խոսքով: Այնուհետեւ ներկաներին ողջունեցին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինսկին ուղերձը ներկայացրեց դեսպանատան խորհրդական Ալեքսանդր Վասիլեւը: Ողջույնի խոսք ասաց նաեւ Երեւանի Կապույտ մզկիթի հավաքական աղոթքի իմամ Ալի Շաջաանը:

Նիստերի ընթացքում «Կրոնների եւ մշակույթների դերը խաղաղության եւ համագործակցության հաստատման գործընթացում» թեմայի վերաբերյալ ելույթներ ունեցան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե Ծ. վրդ. Անանյանը եւ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյդեդ Մոհամադ Ռեզա Հեյդարին:

ԱՊՀ երկրների ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն քաղաքագետ Ալեքսանդր Մարկարովը եւ Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը բանախոսեցին «Հայաստան եւ հարեաններ. հարաբերությունների զարգացման տեսլական» նյութի շուրջ:

Համաժողովի վերջին միսին սարածաբանային բազմազանության առկա մասհարավներն եւ հնարավորություններն վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Թուրքիայից Ժամանաձ մարաբան Աղման Չելիքը եւ լրագրող Սերգա Քոռուզն, Վրաստանի սարածաբանային անվանագիտական հարավկովկասյան ինստիտուտի սեփական Ալեքսանդր Ռուսեցկին, Բազմավարական հեռագոսությունների ռուսական ինստիտուտից ֆաղաֆազե Յանա Ամելինան, Երեւանի ղեկավար համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի ղեկավար Ռուբեն Մելիքյանը եւ միջազգային հարաբերությունների եւ դիվանագիտության ամբիոնի վարիչ Վահրամ Պետրոսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Իրանի նախագահին

Նոյեմբերի 13-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիին՝ Իրանի Զերմանշահ նահանգում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի կապակցությամբ:

«Մեծ ցավով տեղեկացանք Իրանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի մասին, որը պատճառ է դարձել հարյուրավոր մարդկային զոհերի եւ վիրավորների՝ անօթեան թողնելով հազարավոր ընտանիքների:

Մեր ժողովուրդը, որ շուրջ երեք տասնամյակ առաջ վերապրել է մեր երկրին պատուհասած այս աղետը, խորապես կիսում է Իրանի բարեկամ ժողովրդի ցավը՝ մաղթելով, որ Ձեր առաջնորդությամբ եւ Իրանի ողջ ժողովրդի միասնական ջանքերով շուտով հաղթահարվեն աղետի պատճառած վնասները, եւ երկրում հաստատվի խաղաղ ու անվտանգ կյանքը», - նշել է Վեհափառ Հայրապետն իր ցավակցագրում:

Նորին Սրբությունը Երկնավորի մխիթարությունն է հայցել բոլոր սգակիրներին եւ առողջություն մաղթել երկրաշարժից տուժած վիրավորներին:



շրջանակներում ծավալվելիք զեկույցումների ու քննարկումների արդյունքում վեր հանվեն ինչպալ թանգարանների տեղն ու դերը հասարակությունների կյանքում, ինչպես նաեւ խնդրող թանգարանները միմյանց ի մոտո ճանաչելով՝ ձեռնամուխ լինեն սերտ համագործակցության՝ համերաշխության ու հանդուրժողականության գաղափարների հաստատման գործին բարի ու կարեւոր ծառայություն մատուցելով, նպաստելով միջկրոնական, միջմշակութային երկխոսության ճանապարհով ցանկալի եւ բարերար համերաշխության ու խաղաղության հաստատմանը հասարակությունների մեջ:

Կոնֆերանսի թեմաներն էին.

ա. մասնակից թանգարանների ներկայացում,

բ. Թեոսոփի կյանքում կրոնի տեղն ու առաքելությունն անցյալում եւ այսօր,

գ. կրոնական մշակույթի ստեղծման ու զարգացման պատմությունը,

դ. կրոնական թանգարանը որպես կրոնական հուզումների եւ զգացմունքների առաջացման ու զարգացման օջախ,

ե. կրոնական մշակույթների նպաստը միջազգային համերաշխության եւ հանդուրժողականության գաղափարների հաստատման գործում:

Կոնֆերանսին մասնակցում էին թանգարանագետներ, արվեստա-

«յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» հաստատմանն ու պահպանմանը: Իսկ այդ ամենով հանդերձ՝ կրոնական թանգարաններն իրենց առաքելությամբ մարդու առջեւ բացում են աստվածային մշակույթի դռները եւ նրան հայտնում ճշմարտությունը: Արդարեւ, երբ մարդ գիտակցեց, որ ինքն աստվածային մշակույթի ստեղծագործությունն է, նա իր արարելու կարողությունը, ինչպես Արարիչն Աստված, կծառայեցնի բացառապես բարին կերտելու, բարությունն ու սեր սփռելու եւ լուսավորելու համար»: Ասողիկ քահանան նաեւ ընդգծեց, որ կրոնական ամեն մի թանգարան կոչված է միջմշակութային ու միջկրոնական երկխոսության մեջ լինելու վառվող ճրագ՝ հաստատելով, որ այսօր, առավել քան երբեք, միջազգային հարաբերություններում մշակութային քաղաքականությունն առավել զորեղ է, առավել ներգործող է ու արդյունավետ, քան որեւէ այլ միջոց:

Այնուհետեւ մասնակիցներին ողջունեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը՝ փոխանցելով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները: Ողջույնի խոսք ասացին նաեւ ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի Հարավային Կովկասում տարածաշրջանային ծրագրի

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովվապետական այցը



Սկզբը՝ էջ 2
 Դժվարությունների հանդիման, ձեռքբերումների ու հաղթանակների մեջ միշտ բարձր պահեցինք խաչի պարծանքը՝ ըստ առաքյալի խոսքի. «Քառ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Յիսուս Քրիստոսի խաչով»: Սրբոց Ղեւոնդյանց ևահատակների նվիրական անունը կրող այս եկեղեցին նույնպես մեր հայրերի հավատքի ոգին ու ավանդի է փոխանցում մեզ: Հիրա-

ցաբերվող գորակցությունը՝ հորդորելով, որ ապավինած Տիրոջ խաչի փրկաբեր գործությանը՝ հաստատուն մնան հավատքի եւ ազգային կյանքի առաքելության մեջ, հավատարմորեն պահեն ավետարանական պատգամները եւ հայրենավան սրբությունները:

Նույն օրը՝ երեկոյան, հովվապետական այցի առիթով տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին հոգեւո-



վի, մեր ինքնությունը, գոյությունն ու հարատևությունը հիմնված են խաչանշան մեր հավատքի եւ խաչադրոշմ մեր հայրենիքի ու հայրենյաց ժառանգության վրա, որոնք այսօր էլ ազգային եւ հոգեւոր-բարոյական մեր նկարագրի առհավատցյան են, ապրելու, պայքարելու, հաղթելու մեր ուժն ու գրավականը»:

Գարեգին Բ Հայրապետը շեշտեց, որ առկա դժվարություններն ու խնդիրները հաղթահարելի են առ Աստված ապավինությամբ, խաչի խորհրդով ու գործությամբ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գնահատեց հայրենիքին, սիրիահայ եւ իրաքահայ մեր եղբայրներին ու քույրերին ավերակահայության կողմից ցու-

րականներ, Լոս Անջելեսի քաղաքապետ տիար Էրիկ Գարսեթին, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան տիար Գրիգոր Հովհաննիսյանը, պետական այրեր, բարերարներ, հավատացյալ հայորդիներ:

Ճաշկերույթի ընթացքում ցուցադրվեցին ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի 90-ամյակին նվիրված ֆիլմը եւ «Շողակաթ» հեռուստաընկերության պատրաստած տեսաֆիլմը՝ Հառիճավանքի Թրբանյան ընծայարանի մասին:

Հանդիսությունը Հառիճի Թրբանյան ընծայարանի շրջանավարտ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանում ուսանող սաները հանդես եկան հոգեւոր ու ժողովրդական երգերի կատարումներով:



Վերջում Վեհափառ Հայրապետն իր հայրական խոսքն ու պատգամն ուղղեց ներկաներին՝ իր ուրախությունը, շնորհավորանքներն ու բարեմաղթանքները հայտնելով ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի հաստատման 90-ամյակի առիթով: Նորին Սրբությունն անդադարձավ ամերիկահայ համայնքի անցած ծանապարհին, ներկա հաջողություններին, ինը տասնամյակների ընթացքում թեմի եկեղեցաշեն ու ազգօգուտ իրագործումներին: Վեհափառ Հայրապետը գնահատեց հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում ամերիկահայության ջանքերն ու ներդրումները, Մայր Աթոռի ծրագրերին սատարումը, նվիրյալ հայորդիների գորակցությունը մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը, հորդորեց նախանձախնդրությամբ շարունակել աջակցել հայրենիքին ու Եկեղեցուն:

Հանդիսավոր ճաշկերույթի առիթով ի մասնավորի գնահատանք հայտնելով հարգարժան տեր եւ տիկին՝ Ժիրայր եւ Փաթրիսիա Թրբանյաններին՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ նրանց բարի ձեռնարկներին, եկեղեցաշեն ու ազգօգուտ ծրագրերի համար սրտաբուխ նվիրատվություններին: Բարձրորեն գնահատելով Թրբանյան ընտանիքի մեծ վաստակը ազգային-եկեղեցական անդաստանում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը տիար Ժիրայր Թրբանյանին շնորհեց «Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական բարձր շքանշանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով ժամանեց Մեխիկայի մայրաքաղաք Մեխիկո

Հոկտեմբերի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը հովվապետական այցով ժամանեց Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկո:

Օղանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Մեքսիկայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Արա Այվազյանը, Մեքսիկայի Մարոնիտ Եկեղեցու արքեպիսկոպոս Ջորջ Աբի Յունեսը, Մեքսիկայի հայ համայնքի հոգեւոր հովիվ Սասուն վրդ. Չմրուխտյանը, հայ համայնքի անդամներ:

Օղանավակայանից Նորին Սրբությունն ուղեւորվեց ՀՀ դեսպանատուն, հանդիպում ունեցավ դեսպանատան աշխատակիցների հետ: Այնուհետեւ Հայոց Հայրապետն այցելեց Գուադալուպեի եկեղեցի, որտեղ տեղի հոգեւորականների հետ աղոթք բարձրացվեց առ Աստված: Նորին Սրբությունը հանդիպեց նաեւ Մեխիկոյի քաղաքապետ Միգել Անխել Մանսեռային:

Այնուհետեւ Մեխիկոյի կաթոլիկ Մայր տաճարում տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք, որին ներկա էին Մեքսիկայի կաթոլիկ Նորբերտո Ռիվերա Կառնան, պապական նվիրակը, քույր Եկեղեցիների եւ պետական իշխանությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ հավատացյալներ: Արարողության ընթացքում քառաձայն գեղեցիկ երգեցողությամբ հանդես եկավ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի Սրբոց Ղեւոն-



դյանց եկեղեցու երգչախումբը: Նորին Սրբությունը հանդես եկավ պատգամով՝ հայրապետական իր օրհնությունն ու ողջույնը բերելով ներկաներին, եւ ցավ հայտնեց վերջերս Մեխիկոյի պատուհասած երկրաշարժի կապակցությամբ: Վեհափառ Հայրապետն իր խոսքում մասնավորապես ասաց. «Հույսով ուրախացեք, ներդրության համբերեցեք, հաճախակի աղոթեցեք» (Հռոմ. ԺԲ 12): Որպես հոգեւոր դարման եւ սփոփանք մեր առջեւ ծառացող ամեն մարտահրավերի ու դժվարության հաղթահարման՝ սր Պողոս առաքյալի այս խոսքերն ենք փոխանցում ձեզ՝ կյանքը լուսավորե-

րությամբ՝ համբերությամբ ու աղոթքով լծվելու Նոր կյանքի կերտմանը:

Միտելինե՛ր, հայ ժողովրդի այս վկայությունն ենք կամենում փոխանցել ձեզ. մի ժողովուրդ, որի կյանքը պատմության արահետներում, հակառակ անհամար փորձություններին, դժվարությունների, որոգայթների եւ կոտորածների, միշտ էլ եղավ հարության, առ Աստված ապավինության եւ վերաշինության պատմություն:

Առ Աստված հավատքով եւ քրիստոնեական առաքինության սկստմամբ ամենայն նախանձախնդրությամբ Մեքսիկա-



լու տերունապարգեւ հույսով եւ օրհնությամբ: Մեր ժողովուրդը եւս կրել է աղետալի երկրաշարժի պատուհասած ցավը՝ 1988 թ.: Այդ օրերի դառնությունը տակավին էլ ջնջվել մեր ժողովրդի հավաքական հիշողությունից, սակայն հայրենի մեր երկիրը եւ մեր կյանքը վերականգնված տեսնելու վճռականությունը, մեզ օգնության հասած բարեսեր մարդկանց, մարդասիրական կազմակերպությանց եւ բարեկամ երկրների պարգած օգնության ձեռքը, դրսևորած սերն ու կարեկցանքը, հոգեւոր մխիթարությունն ու քաջալերությունը մեզ համակեցին լավատեսությամբ, լցրեցին զո-

յի ժողովուրդը, որի անքակտելի մասն է կազմում նաեւ մեր հայ համայնքը, այսօր նույնպես աղետի հետեւանքները վերացնելու գործին լծված է հույսով, զոհվածների հարազատներին սփոփելու եւ վիրավորներին դարմանելու ծանր առաքելության մեջ զինված է աղոթքով ու համբերությամբ՝ հաղթահարելու Մեքսիկայի պատմության մեջ դժվարին այս փորձությունը: Մեր մաղթանքն է, որ Տերն Իր ամենազոր Աջի ներքո պահի Մեքսիկայի Կաթոլիկ Եկեղեցին, զորացնի բարեշնչան հոգեւոր սպասավորներին՝ երկնավոր Վարդապետի կողմից իրենց վստահված կոչ-



ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ



ման մեջ՝ անսպառ սիրով ու կարեկցությամբ, հոգեւոր մխիթարությամբ եւ հույսով սփռելու համար Մեխիկոյի աստվածասեր ժողովրդին, դարմանելու աղետալի երկրաշարժի հետեւանքով պատճառված հոգեւոր, բարոյական ու նյութական վնասները»։ Հայոց Հայրապետը քաջալերություն ու մխիթարություն մաղթեց Մեքսիկայի ժողովրդին եւ աղոթեց զոհվածների հոգիների հանգստության համար։

Արարողությունից հետո Նորին Սրբությունն այցելեց Մեխիկոյի «Հիշողության եւ հանդուրժողականության թանգարան», որտեղ ներկայացված են 20-րդ դարի ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության մասին պատմող ցուցանմուշներ։ Թանգարանի հանդիսությունների սրահում ընդունելություն էր կազմակերպվել Մեխիկոյի հայ համայնքի կողմից։

Հանդիպմանը ներկա էին նաեւ ՀՀ դեսպան Արա Այվազյանը, քաղաքային իշխանությունների եւ քույր եկեղեցիների ներկայացուցիչներ։ Բարիգալստյան խոսք ասաց ՀՀ դեսպանը։ Համայնքի անդամները հանդես եկան ողջույնի խոսքերով՝ իրենց խանդավառությունն ու ուրախությունը հայտնելով Վեհափառ Հայրապետի այցելության առիթով։ Նորին Սրբությունը ողջունեց այս հանդիպմանը քույր եկեղեցիների ներկայացուցիչների, պետական այրերի ներկայությունը, իր օրհնությունը բերեց հայ համայնքին՝ արտահայտելով իր ուրախությունն ու ջերմ տպավորությունները այցելության առիթով։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց մեքսիկահայ հայորդիներին հաստատուն մնալ իրենց եկեղեցանվիրման ու ազգանվիրման առաքելության մեջ։

Բորբենմում սեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը

Նոյեմբերի 1-3-ը, Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախագահությամբ, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը։

Ժողովն սկսվեց միասնական՝ Տերունական աղոթքով, որից հետո ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդ Հովնաթան արք. Տերտերյանը թեմի հոգեւորականների եւ աշխարհականների անունից բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը եւ ԳՀԽ-ի անդամներին՝ անդրադառնալով թեմի հիմնադրման 90-ամյակի առիթով Վեհափառ Հայրապետի կատարած հովվապետ-

տական այցի մանրամասներին։ Սրբազան հայրը շեշտեց, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատմական այս այցը մեծ ուրախություն եւ խանդավառություն է առաջացրել ԱՄՆ արեւմտյան հայոց թեմում՝ զորացնելով սերը եւ նվիրումը Ս. Էջմիածնի եւ հայրենիքի հանդեպ։ Նա վստահեցրեց, որ Վեհափառ Հայրապետի այցից հետո վերանորոգված հավատքով, նվիրումով եւ սիրով պիտի շարունակեն իրենց առաքելությունը՝ ի շահ Հայոց եկեղեցու պայծառության եւ բարգավաճման։

Այնուհետեւ ԳՀԽ-ի անդամներին հայրապետական իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Նորին Սրբությունը շեշտեց, որ հովվապետական այս այցի առանցքում



հայ պատանիներն ու երիտասարդներն էին։ Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ հայրենիքից հեռու Նրանց մեջ գորավոր են ազգասիրությունն ու եկեղեցասիրությունը, նախանձախնդրությունը հայոց լեզվի եւ մեր ազգային արժեքների պահպանության գործում։ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Մեքսիկա կատարած հովվապետական իր անդրանիկ այցին, ուր իր օրհնությունը բաշխեց տեղի հայությանը, եւ միասնաբար աղոթեցին երկրաշարժից զոհվածների հոգիների հանգստության համար։

Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Հովնաթան արք. Տերտերյանին, թեմական խորհրդի ատենապետ տիար Ժոզեֆ Կանիմյանին, Արեւմտյան թեմի հոգեւոր սպասավորներին եւ աշխարհականներին՝ հովվապետական այցի ժամանակ ցուցաբերած ջերմ ընդունելության եւ հյուրընկալության համար։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց նաեւ ԳՀԽ-ի Նորընտիր կազմին՝ մաղթելով արդյունաշատ եւ բեղուն աշխատանք։

Ժողովի նիստերն ատենապետեցին ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնաթան արք. Տերտերյանը եւ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը։

Օրակարգի հաստատումից հետո ընթերցվեց եւ հաստատվեց Նախորդ՝ 2017 թ. մայիսի 16-17-ին գումարված ԳՀԽ-ի ժողովի արձանագրությունը։

Այնուհետեւ Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց ԳՀԽ-ի կանոնադրության լրամշակված Նախագիծը, որը պատրաստվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի կողմից։ Նախագծի վերաբերյալ անհրաժեշտ լուսաբանություններ տվեցին հանձնախմբի անդամներ Հովնաթան արք. Տերտերյանը, Արշակ եպս Խաչատրյանը եւ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր տիար Գեւորգ Դանիելյանը։ Ժողովականներն իրենց դիտարկումներն ու սրբագրություններն առաջարկեցին կանոնադրության հոդվածների վերաբերյալ։ Գերագույն հոգեւոր խորհուրդը որոշեց խմբագրական աշխատանքից հետո կանոնադրության Նախագիծն առաքել թեմեր՝ առաջարկությունների եւ դիտարկումների համար։

Ժողովին «Դավիդյան» հիմնադրամի Նախագահ եւ բարե-

ծրագրերի մանրամասները։ Սրբազան հայրը կշեց, որ տարվա ամփոփումը կլինի հուլիսի 5-8-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Նախատեսված համընդհանուր ուխտագնացությունը։ Տարվա ընթացքում նաեւ կկազմակերպվեն երիտասարդական ուխտագնացություններ թեմակալ առաջնորդների հետ դեպի Ս. Էջմիածին։

ԳՀԽ-ի ժողովի ընթացքում համատեղ նիստ գումարվեց թե-

րակցության (ԱՀԱԸ) հոգաբարձուների խորհրդի, Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի, Հյուսիսային Ամերիկայի հայ Ավետարանական Եկեղեցիների միության, Հայկազյան համալսարանի հոգաբարձուների խորհրդի ներկայացուցիչներին։

Վերջիններս խորին երախտագիտություն հայտնեցին Նորին Սրբությանը՝ ԱՄՆ հայոց ա-



մական խորհրդի անդամների հետ, որի ժամանակ ԱՄՆ արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Հովնաթան արք. Տերտերյանն ընդհանուր զեկույց ներկայացրեց թեմի գործունեության եւ իրականացվող ծրագրերի մասին։

Ժողովի վերջում Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ ԳՀԽ-ի անդամների արդյունավետ աշխատանքին՝ ի նպաստ եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման։ Նորին Սրբությունն իր մասնավոր գնահատանքն ու օրհնությունն ուղղեց նաեւ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդին եւ թեմական խորհրդի անդամներին՝ հովվապետական այցը եւ ԳՀԽ-ի նիստերը հավուր պատշաճի կազմակերպելու համար՝ առ Աստված աղոթք հղելով թեմի պայծառության եւ հավատացյալ ամերիկահայերի կյանքի բարօրության համար։

Ժողովն ամփոփվեց Պահպանիչ աղոթքով։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ամերիկայի հայ ավետարանական ընկերակցության ներկայացուցիչների հետ

Նոյեմբերի 3-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արեւմտյան թեմի առաջնորդանիստ կենտրոնում Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեցին հայ ավետարանական ընկերակցության ներկայացուցիչներին։



Խոսքը եզրափակելով՝ Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ Հայ Ավետարանական Եկեղեցին Նոր արդյունքներով ու ձեռքբերումներով պիտի շարունակի համալրել բարեփոխական իր ծառայությունները՝ հանուն հայրենիքի զորացման եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի բարօրության։

ՋԵՅՄՍ ՌԱՍՍԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 16-19

Իր հմտությունը զրադաշտական ուսմունքի մեջ դրսևորելու համար Ռասսելը բերում է պարսկերեն «փանդամ» (*James R. Russell. P. 278 note 35*) եզրույթը՝ իբրեւ հայ ժողովրդի նախաքրիստոնեական կրակապաշտության ապացույց՝ օգտվելով ոչ թե Չորաստրիգի վերաբերյալ որեւէ սկզբնաղբյուրից, այլ պարզապես V դարի կեսերի հայ հեղինակ Եղիշեի Վարդանանց պատմությունից, որտեղ պարսից հազարապետ Միհրներսեհը հայ հոգեւորականներին եւ նախարարներին ուղղված նամակում պահանջում է հայ ժողովրդին դարձնել կրակապաշտ եւ դրա համար հրահանգում անվերապահ ընդունել մազդեզական կրոնի մի ամբողջ շարք կանոններ՝ եկեղեցիները փակելու, դրանց փոխարեն ատրուշաններ եւ կրակատներ հիմնելու, խմորն առանց փանդամի չհունցելու (*H. Hübschmann, Armenische Crammatik, Leipzig, 1897, S. 254. 3ր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. Երեւան, 1979, հտ. 7, էջ 468 - պիլ. padām,- «ըստ զրադաշտական դեմի» աղոթքի ժամանակ քիթն ու բերանը կապելու կոդապատ (տպ. սխալ՝ կողպատ - Ա. Մ.), որով մարդուս անմաքուր շունչը արգելվում էր սուրբ կրակին դիպչելուց»։ Մինչդեռ Եղիշեի մոտ (էջ 52), ըստ զրադաշտական կրոնի, փանդամը երեսը ծածկելու շղարշ է խմոր հունցելու ժամանակ. «Հայսք առանց փանդամի մի՛ զանգցին», որ է. *Տեր-Մինայանը թարգմանում է «խմորն**

առանց փանդամի չհունցվի», եւ ինքն իրեն հակասելով՝ «փանդամ» պարսկերեն բառը բացատրում է՝ «Ճերմակ լաթից քող, որով մոզերն իրենց դեմքերը ծածկում էին կրակին մոտենալիս, որպեսզի իրենց արտաշնչությամբ չպղծեն սուրբ հուրը» - Եղիշե (աշխարհաբար), Երեւան, 1958, էջ 51, էջ 196 ծան. 67: Խմորն էր շփվում սրբազան կրակին, ոչ թե մարդու շունչը: Ռորոշ «ուսյալներ» գրաբար «հայս» բառը հասկացել են ոչ թե «խմոր», այլ «հայք», այսինքն՝ «հայեր» կամ «Հայաստան»), ձեռքերը գումիզով (կովի մեզով) լվանալու եւ այլ պահանջներ:

Ստրաբոնի նկարագրած ծեսի ժամանակ մոզերը հմայության համար օգտագործում են նաեւ ճյուղերի կապոց, որի նմանը Եզնիկ Կողբացին անվանում է «բարսմունք» (Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց), որով պարսից աստված Չրվանը հազար տարի հաշտ էր անում զավակ ծնելու համար: Դեռ տասնամյակներ առաջ եւ բացահայտել եմ, որ այս «բարսմունք» բառը դեռ հայ մատենագրության վաղ շրջանից աղճատված է եղել, եւ կարելի ասել՝ գրեթե 1500 տարի գործածվում է նույն աղճատված ձեւով: Ըստ այդմ՝ «բարսմունք» եւ ուղղում



սակայն Հրաչյա Աճառյանն այս բառի կապակցությամբ չի անդրադարձել «բարսմունք» աղավաղված ձեւին եւ դնում է որպես առանձին գլխաբառ «բարսմունք»՝ ծագումը վերագրելով գեներեն *varsam* բառին (*3ր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. Երեւան, 1971, հտ. Ա, էջ 429-430*): Այդ դեպքում հարկ կլինի կարծել, թե Ստրաբոնի *desmen ton rambon* արտահայտությունը նույնպես ծագում է գեներենից - մի բան, որ անհնար է ենթադրել:

Սակայն, եթե զրադաշտ մոզերի համար «անշեջ հուրը» երանության բարձրակետն է, Գրիգոր Պարթեւի համար այն գտնվում է ոչ թե լույսի այս կողմում, այլ խավարից այն կողմ, իսկ պաշտողները «զղիւաց կամս ունին [...]», հրաժարեալ ի կենդանի լուսոյն եւ ի սրբութեան փառացն ելանեն ի խաւարն արտաքին հրախառն. ուր որդն նոցա ոչ վախճանի, եւ հուրն ոչ շիջանի» (*Յաճախապատում ճառք. Վաղարշապատ, 1894-96, հրատ. Ա. Տեր Միքելեանի. Ճառք է, էջ 42*):

6. Հակառակ պրոֆ. Ռասսելի պնդման, իբր Կարտիր մոզպետի

քարոզած կրակապաշտությունը Կապադովկիայից է Հայաստան անցել, Եվսեբիոս Կեսարացին վկայում է, որ Կապադովկիայում բնակվող հայերի ընդունած քրիստոնեությունն է տարածվել Հայաստանում: Եվսեբիոսը հարողորում է, թե Հովհոս Մաքսիմի-նոսը՝ Հռոմի բռնապետ Մաքսենտիոսի ժամանակ Արեւելքի Կեսարը, 311-312 թվին պատերազմ ձեռնարկեց քրիստոնյա հայերի դեմ, որոնք ապստամբել էին կրոնական խիստ հալածանքների պատճառով: «Սրա հետ մեկտեղ բռնակալի (Մաքսիմիանոսի) ձեռքով պատերազմ հարուցվեց հայերի դեմ, որոնք սկզբից ի վեր բարեկամ եւ զինակից էին հռոմեացիներին [...]»: Բայց որովհետեւ նրանք քրիստոնյա էին եւ եռանդով ու բարեպաշտությամբ երկրպագում էին Աստծուն, այս աստվածատյացը ստիպեց նրանց, որ զոհ մատուցեն կուռքերին ու դեւերին. ուստի նրանց, որ բարեկամ ու դաշնակից էին, դարձրեց թշնամի ու մարտնչող: [...] Արդ՝ նա իր զորքով հայերի դեմ պատերազմելով, շատ վայրերում հարվածներ կրեց եւ խայտառակվեց նրանց առաջ» (*Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, Դարութիւն իններորդ, գլ. Ը, էջ 688-689*): Դա քրիստոնեությունն ընդունած Նոր աշխարհի առաջին պատերազմն էր հեթանոս Հռոմի դեմ, որն ավարտվեց քրիստոնյա հայերի հաղթանակով, սակայն սրան ոչ մի խոսքով չի անդրադառնում Ռասսելը:

Շարունակությունը՝ էջ 7

«...նչինչ չբերեցինք աշխարհ, ոչ էլ պիտի կարողանանք տանել...»

Ա Տիմ. 2 7

Մարդկության պատմության ողջ ընթացքում՝ ստրկատիրական հասարակարգից մինչեւ կապիտալիզմ, մշտապես հուզել են դասակարգային տարբերության, սոցիալական անհավասարության ու բեւեռացման, հարստության եւ չքավորության, հոգեւոր ու նյութական «ինչքի» հիմնահարցերը:

Մարդն աշխատանքի արդյունքում ձեռք է բերում նյութական որոշակի կարողություն, որի տնօրինումը նրա անվիճարկելի իրավունքներից է: Արարիչն ինքն է հաստատում այս իրավունքը եւ շնորհում մեզ. «*Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան...*» (Շննդ. Ա 28): Նախածնողների անհնազանդությունից հետո երկնային Հայրը պատժում է Ադամին՝ ասելով. «*Զո երեսի քրտիկնով ուտես հացդ մինչեւ հող դառնալը...*» (Շննդ. Գ 19), այսինքն՝ մարդն այդուհետ պետք է տանջանքով եւ չարչարանքով ստեղծեր սեփական ապրուստը:

Հետագայում Նոր Կտակարանում Տիրոջ այս խոսքերը նոր բովանդակություն են ստանում՝ «...թող աշխատի իր ձեռքերով բարիք արտադրել, որպեսզի կարող լինի տալու նրան, ով կարիքի մեջ է...» (Եփ. Դ 28): Նյութական միջոցներն անհրաժեշտ են կենսապայմանների, իսկ բարոյական տեսանկյունից՝ անձնական ինքնուրույնության եւ անկախության ապահովման համար: Երբ անհատը չի կարողանում ստեղծ

ծել ապրուստի անհրաժեշտ միջոցներ, ինքնաբերաբար հայտնվում է մյուսներից կախյալ վիճակում, ինչն էլ իր հերթին խաթարում է նրա հոգեկան խաղաղությունը, փոթորկում հույզերն ու զգացմունքները: Այս մասին է խոսում նաեւ Պողոս առաքյալը. «...եւ ոչ ոքի հացը ձրի չկերանք, այլ ջանքով եւ վաստակով գոր ու գիշեր աշխատում էինք՝ ձեզնից ոչ մեկի վրա ծանրություն չլինելու համար. ոչ թե նրա համար, որ իշխանություն չունեինք, այլ որպեսզի մենք մեզ օրինակ դարձնենք ձեզ...» (Բ Թես. Գ 8-9): Այսինքն՝ աշխատելն ու արարելը նաեւ մարդու պարտականություններն են, որոնց իրագործմամբ վերջինս խուսափում է ընչազրկությունից:

Իսկ ի՞նչ է հարստությունը... Բառարաններում սահմանվում է այսպես՝ «*Հարստությունը նյութական սեփականություն է, որի չափը մի քանի անգամ գերազանցում է կենսականորեն անհրաժեշտ մակարդակը...*»: Մեր նպատակը, սակայն, բառարանային սահմանումները ներկայացնելը չէ, այլ հարստության՝ աստվածաշնչյան ընկալումներին անդրադառնալը:

Աստվածաշունչ մատյանում առկա են հարստությանը վերաբերող տարբեր վկայություններ... Հարստությունը կարող է ընկալվել որպես աստվածային օրհնություն՝ շնորհված բարեպաշտին. «*Տիրոջ օրհնությունը զլիսին է, եւ նա էլ հարստացնում է նրանց եւ չի ա-*

ՊԱՐԳԵ՞Վ, ԹԵ՞...



վելացնում նրանց սրտի տրամությունը» (Առակ. Ժ 22): Ուշադրություն դարձնենք՝ «*արդարների զլիսին է*», այսինքն՝ միայն արդար ճանապարհով, սեփական քրտիկնով ստեղծված հարստությունը, ինչքը կարող է համարվել Աստծո օրհնություն: Հոբի դեպքում հարստությունը պարզեւ էր՝ տրված դաժան փորձություններին դիմակայելու դիմաց. «*Տերը կրկնակի ավելի շատ տվեց, քան այն հարստությունը, որ առաջ հոբն ուներ...*» (Հոբ ԽԲ 10): Ըստ Առակաց գրքի՝ հարստությունը Տիրոջ կողմից շնորհվում է նաեւ ջանասիրության եւ «անարատության» համար (հմմտ. ԺԲ 27):

Ինչպես սուրբգրային ժամանակաշրջանում, այնպես եւ այսօր քիչ չեն դեպքերը, երբ հարստության տեր է դառնում անխիղճ, անազնիվ մարդը. «*Ահա մեղավոր են, եւ սակայն բարգավաճում են*

նրանք, կան եւ ունեն հարստությունն աշխարհի...» (Սաղմ. ՀԲ 12): Ուստի, հարստությունը չի կարող բարեպաշտության, իսկ աղքատությունը՝ Աստծո առջեւ մեղանշականության կամ անարդարության չափանիշ լինել. այս մասին է վկայում նաեւ Աստվածաշունչը. «*Ճմարտության հետ գնացող աղքատն ավելի լավ է ստի հետ ընթացող հարուստից*» (Առակ. ԻԶ 6): Երբեմն արտաքուստ «բարեպաշտի» կերպար ստեղծած մարդը կարող է անարդար եւ ոչ ազնիվ ճանապարհով հարստություն ձեռք բերել. այսպիսիների մասին ավետարանիչն ասում է. «*Նրանք ուտում են այրիների տները, ցուցադրաբար երկարացնում են աղոթքները, որպեսզի ավելի խիստ դատաստան ընդունեն*» (Մարկ. ԺԲ 40): Մինչդեռ իմաստունն աղոթում է երկնային Հորը՝ խնդրելով. «*Հարս-*

տություն եւ աղքատություն մի՛ տուր ինձ, այլ ինձ համար կշռի՛ր արժանին, որ բավական է: Չլինի թե հարստանամ եւ ուրանամ քեզ ու ասեմ. «Ո՞վ է ինձ տեսնում». կամ աղքատանամ ու բան գողանամ եւ երդում ուտեմ իմ Աստծու անունով» (Առակ. Լ 8):

Չքավորությունն ու հարստությունը նույնքան «վտանգավոր» են մարդու համար: Ոմանք սեփական կյանքի միակ նպատակն ու ձգտումը համարում են հարստանալը, ապրելու իմաստը տեսնում նյութական անցողիկ ինչքի մեջ՝ անտեսելով իրական արժեքները, չնկատելով գեղեցիկն ու բարին, մոռանալով թանկ եւ հարգատար մարդկանց, հեռանալով մշտամսայից ու հավիտենականից, ի վերջո, խեղելով եւ ոչնչացնելով իրենց մեջ Աստծո պատկերն ու նմանությունը: Հարստանալու անհազուրդ ցանկությունը խանգարում է մարդուն տարբերակելու արդարն ու անարդարը. «*Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձության, որոգայթի եւ բազում անմիտ ու վնասակար ցանկությունների մեջ, որոնք ընկղմում-տանում են մարդկանց դեպի կործանում եւ դեպի կորուստ, որովհետեւ բոլոր չարիքների արմատը փողոսի-րությունն է, որին ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից եւ իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ*» (Ա Տիմ. 6-10): Նույնիսկ այն դեպքում, երբ մարդ քրտնաջան աշխատանքով է ձեռք բերել իր ունեցվածքը, չպետք է դառնա նյութի գերին. «...եթե հարստությունն առվի պես իսկ հոսի, թող ձեր սրտերը չցանկանան...» (Սաղմ. ԿԼ 11):

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ թիվ 14-17, 19-20

1922 թ. հուլիսի 14-ին Չարենցը ժամանակավոր համախոհների հետ հրատարակեց «Երեքի» դեկլարացիան եւ «մայրագյուղ» Երեւանում սկզբնավորեց գրական կյանքը: Երեւանը նոր էր դարձել մայրաքաղաք, եւ Չարենցն այդ մայրաքաղաք կոչվածի գրական կնքահայրն էր ու առաջնորդը: Հենց «Երեք»-ի դեկլարացիայի դրույթներից ելնելով էլ՝ նա նախ ժխտեց իրեն մերձավոր հեղինակություններին՝ լուռեցի Օհանեսին, գյումրեցի Ավոյին եւ զանձացի Վահանին, ովքեր, իբր, դարձել էին մեր գրական ետընթացի ներկայացուցիչները, իսկ Վահան Տերյանը գրականությունը դարձրել էր «թոքախտավոր»: Նոր արվեստի մտայնությամբ նա պահանջեց գրքերը գրողարաններից հանել՝ փողոց, գրել ժողովրդի կենդանի խոսվածքով (ինչը գեղիկ բարբառն էր) եւ սիրո քնարերգությանը հակադրել «սեռական առողջ բնագոյը»։ «Ի՞նչ սեր, երբ միլիոններն են եկել հանդես»։ Այս ամենը նա փորձարկեց «Պոեզոգուռնա» ժողովածուի մեջ, «Ռոմանս անսեր» պոեմում, «Ասպատական» ռապսոդիայի եւ «Կապկազ» թամաշա թատերգության մեջ։ Չարենցը 1923-ին փորձեց ստեղծել կուրեֆուտուրիստական պարբերական, բայց համախոհներ չգտավ։ 1924-ին համախոհներ հայտնվեցին, եւ տպագրեց «Standard»-ի միակ համարը եւ այդ օրերի տրամադրություններով հրատարակեց «Կոմալմանախ» (1924) ժողովածուն։ Մյասնիկյանի հորդորով ամսագրի հրատարակությունը կասեցվեց։ Մյասնիկյանի օգնությամբ նույն 1924-ին մեկնեց Եվրոպա, 1925-ին վերադարձավ եւ ասաց՝ ամո՞թ մեզ, այս ի՞նչ էինք անում։ Այսքանը եղավ նրա փորձարարության շրջանը, ինչի մեջ կային ե՛ւ ապագայապաշտություն, ե՛ւ պրոլետարական մշակույթ (պրոլետկուլտ), ե՛ւ արվեստի ձախ ճակատ (ԼԵՖ), ե՛ւ լեզվական հեղափոխություն։

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Իսկ մեր «նորարարները» գնում են Արեւմուտք, վերադառնում եւ է՛լ ավելի խորացնում գեղեկությունը։ Հիմա հոլանդական կազմակերպություններից մեկը, որն աշխարհի համար Հայաստանի պես կորած գավառներում հովանավորում է «ազատ» արվեստը, վեց տարով հայ «նորարարներին» հնարավորություն է ընձեռել, որպես գեղարվեստի բարձրագույն ազատություն, մշակելու «զուգարանի թեման» գրականության մեջ։ Դե՛ վայելեք ձեր ազատությունը, կիսագրագե՛տ հայ «ավանգարդիստներ»։

Երեք տարվա փորձարարությունից հետո Չարենցը վերադարձավ ինքն իրեն։ Մեծարեց Ռոմանյանին եւ Տերյանի ետեւից աղոթքի պես մրմնջաց. «Վերադարձիր, օ, վերադարձիր...»: Ծաղրեց ապագայապաշտներից փոխ առած սեռական առողջ բնագոյի տեսությունը, դարձավ հայոց լեզվի մոգ եւ «իոգ» (յոգ), դարձավ ոգեղեն մարմնացում նախորդանի, որովհետեւ, ինչպես ի պատասխան թշնամիներին գրած «Ես այն չեմ այլեւս» քնարական ներբողում էր ասում.

Էլ չի՛ հոնդում սիրտս վայրենի,
Ինչպես դաշտերում Նժույգ

սանձարձակ.-

Գզվեց ինձ սիրով մի ձեռք հայրենի,
Եվ ես մի գիշեր իմաստուն դարձա։

Այսօր զարմանալիորեն կրկնվում է նույնը, բայց... առանց Նորոյա Չարենցի, շարունակվում է արդեն շուրջ 20 տարի եւ էլի կշարունակվի ու կվերածվի հերթական շրջապտույտի։



2009 թ. մարտի 17-ին «Հայելի» բանավիճային ակումբում, նույն օրը «Շանթ» հեռուստաընկերության «Հեռանկար»՝ նույնքան բանավիճային հաղորդման մեջ առիթ ունեցաւ առնչվելու այդ «նոր» մտայնությունը ներկայացնողներից մեկի հետ։ Անտեղի ու սխալ բառեր էր օգտագործում՝ «կապիտալիզմ», «սոցիալիզմ», «տոտալիտարիզմ», «սոցոցալիզմ», «տոնադիցիա», «կոյլտ», եւ ուզում էր ինչ-որ բան ասել, բայց ամբողջական միտք չէր ստացվում։ Ըստ նրա՝ սխալ է Պոլշկինը, ով ապրել է ցարի օրոք, սխալ է Չարենցը, որ ապրել է Ստալինի օրոք։ Ասում է՝ «ֆուտուրիզմ»։ Պատասխանում եմ՝ միայն ես երկու մեծ ուսումնասիրություն եմ գրել

այդ ուղղության մասին, իսկ հայ գրականությունն այն «մարսել» է վաղուց՝ հենց Ֆիլիպո Թոմազո Մարինետիի ապագայապաշտության առաջին հանգանակին (1909) հաջորդած Հրանտ Նազարյանցի «Ֆ. Թ. Մարինեթի եւ ապագայապաշտությունը» (Կոստանդնուպոլիս, 1910) գրքով, «Մեիյան» (1914) հանդեսով, Չարենցի ու Կարա-Դարվիշի գործունեությամբ, Կ. Չարյանի բազմաթիվ անդրադարձներով եւ այլն։ Լսում է, եւ զգում ես, որ անտեղյակ է, ինչպես հիշողություն չունեցող չորքոտանի, բայց իր համար հայտնագործություն է արել։ Իմ դիմաց ոչ միայն անտեղյակ, այլեւ պատահական, վրիպած ու ծախված մի գոյություն էր, ով ներկայացնում էր ինչ-որ խմբի շահեր եւ ով (ասացե՛ք, խնդրեմ) չէր հավանում Չարենցին, որովհետեւ... չէր կարդացել։

Խոսում է Արշիլ Գորկուց, թվարկում անցյալի համար նորարար նկարիչների անուններ, ովքեր այսօր արդեն դասականներ են, ինչպես Չարենցը, եւ չի հասկանում, որ արվեստ, մշակույթ կոչված սրբազան տաճարի մեջ ինքն անգամ ներս մտնելու իրավունք չունի, որովհետեւ դրա համար անհրաժեշտ է մուտքի վճար կամ գոնե կանխավճար, ինչը զարգացածության, առնվազն՝ տեղեկացված լինելու աստիճանն է։ Կարծես ծաղիկ իջել, պղնձ գետնին էր խփում եւ նախամտային համոզմունքներով պատգամներ էր հղում...

Արվեստն ունի ե՛ւ փորձարարության իր ստուգողական ժամանակը, ե՛ւ ստեղծագործության իր մնայուն ժամանակը։

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 6

7. Ռասսելը պնդում է, թե «Հայերն ունեին ատրուշան (պարթեւերեն atarōšan-ից) կոչված հրո տաճարներ, եւ թերեւս կային սրբազան հրի զանազան աստիճաններ՝ **նախքան Սասանյան ժամանակաշրջանը**» (James R. Russell. P. 166): Սակայն այս տեսակետն ապացուցելու համար նրա բերած կցկտուր փաստերը վերաբերում են ոչ թե նախասասանյան շրջանի հեթանոսական Հայաստանի ժողովրդական հավատին, այլ մ. թ. IV-V դարերի քրիստոնյա Հայաստանին, երբ Հայոց դարձից հետո՝ համատարած քրիստոնեական հավատի շրջանում, ընդամենը մի քանի ուրացող ու դավաճան հայ իշխանավորներ, իշխանամուկությունից մղված, իրենց կալվածներում հիմնել էին ատրուշաններ, որոնց վերաբերյալ տեղեկությունները Ռասսելը նույնպես քաղել է V դարի հայ պատմիչների երկերից։ Այսպես, նա Փավստոսի Պատմությունից երկու անգամ վերրվ է Հայոց Արշակ թագավորի դեմ պատամբած Մերութան Արծրունու եւ Վահան Մամիկոնյանի քրիստոնեությունն ուրանալու եւ ատրուշաններ (կրակատներ) շինելու փաստը (James R. Russell. P. 128-129, 484, 493. «Յայնմ ժամանակի պատմաբան յարջայն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն, Մերութան անուն Արծրունի /.../ զի եթող զօրէնս քրիստոնեութեան, եւ խոստովան եղեւ Վասն անձին իւրոյ՝ թէ չեմ քրիստոնեայ. եւ կալաւ զօրէնս մազդեզանցն, այսինքն զմոգուոն. եպագ երկիր արեգական եւ կրակի, եւ խոստովան եղեւ՝ թէ աստուածք այն են, զոր թագաւորն Պարսից պաշտէ»

ՋԵՅՄՍ ՌԱՍՍԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



(Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց. Երեւան, 1987, դպր. Դ, գլ. ԻԳ, էջ 218) - «Այնուհետեւ Վահանն Մամիկոնեան եւ Մերութանն Արծրունի, սոքա երկրքեան արք պիղծք աւօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ աստուածպաշտութեանն եւ զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին /.../ Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, եւ զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց. եւ բազում յիւրեանց սեփականանն շինէին ատրուշան, եւ զորդիս եւ զագայիկս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն» (Դ, ԾԹ, էջ 274, 276), Թովմա Արծրունուց եւ Հովհաննես Դրասխանակերտուց՝ թե ինչպես Շավաս Արծրունին, Հագկերտ II-ի օրոք (Թովմա Արծրունին Հագկերտ II-ի փոխարեն հիշատակում է պարսից Պերոզ թագավորին - Թովմա Արծրունի եւ Անանուն.

Պատմութիւն Տանն Արծրունեաց. Ըննական քննադիրը, առաջաբանը եւ ծանոթ. Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի. Երեւան, 2006, դպրություն Բ, Ա, էջ 88), Հայաստանի մայրաքաղաք Դիլիում (ըստ Թովմա Արծրունու՝ Արտաշատ քաղաքի դարպասի առաջ) կառուցում է որմնգրական մեիյան եւ այնտեղ հիմնում սրբազան կրակարան (James R. Russell. P. 167. «Եւ հասեալ Շաւասայայ Արծրունույ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարգպանան՝ շինեն ի դուռն քաղաքին զորմզդական մեհեանն, եւ զկրակապաշտութեան մոլութիւն բորբոքեն ի նմա. եւ կայր աշխարիս ի մեծ վտանգաւոր աղէտս» (Թովմա Արծրունի եւ Անանուն. Բ, Ա, էջ 89): James R. Russell. P. 486-487. «ոմանք ի մերոց նախարարաց դաւաճանեալք ի չարէն ուրացան զհաւատս քրիստոնեութեան հեթանոսական աւ-

րինաց հնազանդեալք: Իսկ աւագադոյնք երկուք ի նոցանէ Շաւասայ Արծրունի եւ Վնդոյ ի Դուին քաղաքէ հրամայեն շինել զմեհեանն Որմզդական եւ գտուն հրապաշտութեան: Եւ քրմապետ կարգէր Վնդոյն գորդի իւր զՇերոյ, եւ դնէր աւրէնս ի Պարսիկ մատենէ բազում» (Հովհաննես Դրասխանակերտից):

V դարի կեսերին Սյունյաց աշխարհում մի ուրիշ ուրացող եւ մոխրապաշտ գտնելով՝ Վարազվադան անունով, որին Ղազար Փարպեցի պատմիչն անվանում է սատանայի գործակից, Ջ. Ռասսելը հիմա էլ սրան է դարձնում Հայաստանում մոխրապաշտության առաջնորդ։ Այս Վարազվադանը մարգպան Վասակ Սյունու դստեր ամուսինն էր, նրա հետ ապրում էր փոխադարձ ատելությամբ եւ չնայած օգտվում էր իր աներոջ ընծեռած բազում վայելչություններից, դարձավ ուրացող եւ հայրենադավ. «Եւ մտեալ ի տուն մոխրանոցին զկրակն ասաց գոլ աստուած, եւ ուրացեալ յանքակ եւ ի միասնական սուրբ Երրորդութենէ՛ն՝ եղեւ դեղագործ մահու եւ մատուակ կրստեան ոգուց /.../» (James R. Russell. P. 491. Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրթ առ Վահան Մամիկոնեան (այսուհետ՝ Փարպ.) . Տիգրիս, 1904 . Դրուագ Բ, գլուխ Ի, էջ 39-40): Ավարայրի ճակատամարտից հետո, երբ մարգպան Վասակ Սյունին դատապարտվեց եւ գրկվեց իշխա-

նությունից, նույն օրը պարսից արքունիքը Սյունյաց աշխարհի տեր կարգեց նրա թշնամի սեպուհ, ուրացող Վարազվադանին, որ «որքան ժամանակս կալեալ զիշխանութիւնն Սիւնեաց՝ բազում արարեալ անիրաւութիւնս եւ բազում տուևս մոխրանոցս շինեալ յաշխարհին Սիւնեաց» (James R. Russell. P. 491. Փարպ., Բ., Խ2, էջ 85):

Նման թափափուկներին Ռասսելը համարում է «ավելի շուտ զրադաշտական Հայաստանում եղած հին բարբերի վերապրուկներ» (James R. Russell. P. 167), բայց հենց այստեղ գիտական անբարեխղճությամբ կարողում եւ միտումնավոր լռության է մատնում ուրացողների վիճակված հատուցումը, թե ինչպես են ժողովրդի հայրենասեր գործիչները սատակում ուրացողներին եւ կործանում նրանց մազդեզական կրակարանները։

Սպարապետ Մանվել Մամիկոնյանը եւ նրա նիզակակից սյունեցի Բաբիկը ճակատամարտում սպանում են պարսկական զորքով Հայաստան ներխուժած Մերութան Արծրունուն (Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց. Ե, գլ. ԽԳ, էջ 386): Դավաճան Վահան Մամիկոնյանին սրախողխող է անում նրա հարազատ որդի Սամվելը (Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց. Դ, գլ. ԾԹ, էջ 276): Այս երկու դեպքերը տեղի են ունեցել IV դարի կեսերին։

Շարունակելի
Ալբերտ ՄՈՒՇԵՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր


Սկիզբը՝ էջ 6

Երբ մարդը դառնում է հարստությանը գերի, վերջինս էլ իր հերթին համարվում է «գերագույն բարիք»՝ «summum bonum», որի համեմատությամբ ամենայն ինչ արժեզրկվում է: Ինչպես Պոդոս առաքյալն է զգուշացնում՝ «...բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, ուրիշ ոմանք ձգտելով՝ մոլորվեցին հավատից եւ իրենք իրենց գցեցին բազում ցավերի մեջ» (Ա Տիմ. 2 10):

Հարստությունը երբեմն մարդու համար փորձություն է դառնում՝ գցելով ծայրահեղության մեջ: Մի դեպքում անձը, մշտապես ապրելով իր ունեցվածքը կորցնելու մտավախությամբ, դառնում է ժլատ եւ ագահ (Իմմտ. Մատթ. 2 19), մյուս դեպքում՝ շվայտ ու ցոփ կյանք է վարում՝ քամուն տալով հարստությունը: Վերջինիս լավագույն օրինակը աստվածաշնչյան անառակ որդին է (Իմմտ. Ղուկ. ԺԵ 13):

Չարիք են դառնում նաեւ հարստությամբ պայմանավորված հպարտությունն ու մեծամտությունը. «Հարուստն իր աչքին իմաստուն է թվում...» (Առակ. ԻԸ 11): Երեմիա մարգարեն եւս զգուշացնում է, որ Նյուբական մեծ կարողության համար չպետք է պարծենալ, քանզի հարստությունն արժանիք չէ (Իմմտ. Երեմ. Թ 23), ավելին՝ այն մարդուն հեռացնում է Աստծո արքայությունից: Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «...ավելի ինչ է, որ պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ Աստծու արքայությունը» (Մատթ. ԺԹ 24): Տիրոջ Որդին սեփական ինչքին կառչածներից զգուշացնում է. «... վա՛յ ձեզ՝ հարուստներիդ, որովհետեւ դուք ձեր մխիթարությունը ստացել եք...» (Ղուկ. 2 24): Հարուս-

ՊԱՐԳԵ՞Վ, ԹԵ՞...



տի է Ղազարոսի մասին առակի հարուստի (Ղուկ. ԺԶ 19), իշխանավորի (Ղուկ. ԺԸ 23), մաքսապետ Չաքեոսի օրինակները ցույց են տալիս՝ ինչպես է հարստությունը մարդուն զգում մեղքի ճիրանները՝ նրա առջեւ փակելով երկնային արքայության մուտքը. «...հարուստներ, լացե՛ք եւ ողբացե՛ք այն թշվառությունների համար, որ գալու են ձեր գլխին. որովհետեւ ձեր հարստությունը փտած է, ձեր արծաթն ու ոսկին՝ ժանգոտած. եւ նրանց ժանգը ձեր դեմ որպես վկայություն պիտի լինի եւ պիտի ուտի ձեր մարմինը, ինչպես կրակ...» (Հակ. Ե 1-3):

Յոփ ու շվայտ կյանքը թույլ չի տալիս լսել եւ ընկալել Աստծո խոսքը. «... լսում է խոսքը, բայց աշխարհիս հոգսերը եւ հարստության պատրանքները խեղդում են խոսքը...» (Մատթ. ԺԳ 22).

Նյութեղենին տիրանալու համար մարդը հաճախ լռեցնում, սպանում է խղճի ձայնը, որն իսկ Աստծո ձայնն է՝ մեր մեջ ապրող: Այս առնչությամբ Ղուկաս ավետարանիչն ասում է. «Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մեկին կատի եւ մյուսին կսիրի, կա՛մ մեկին կմեծարի եւ մյուսին կարհամարհի. չէք կարող ծառայել Աստծուն եւ մամոնային» (Ղուկ. 2 24):

Տիմոթեոսին ուղղված նամակում Փրկչի առաքյալը պատվիրում է. «Այս աշխարհի հարուստներին պատվիրի՛ր, որ չհպարտանան եւ չապավինեն սնտոյի հարստությանը, այլ՝ Աստծուն, որ մեզ առատապես ամեն ինչ տալիս է վայելելու համար. պատվիրի՛ր բարիք գործել, բարի գործերով հարստանալ...» (Ա Տիմ. 2 17-18):

Ճշմարիտ հարստությունը հո-

գեւոր արժեքներն են, մարդկային բարձր որակները, գիտելիքը:

Ճշմարիտ եւ անանց հարստությունը մեր անսասան հավատն է Տիրոջ հանդեպ (Իմմտ. Եփ. Գ 8), «որպեսզի դուք, ըստ իր փառքի մեծության, իր Հոգու միջոցով գործությամբ ամրանաք ներքնապես. այնպես որ, ձեր հավատի միջոցով, Քրիստոս բնակվի ձեր սրտերում, եւ դուք սիրո մեջ արմատավորված ու հաստատված լինեք» (Եփ. Գ 16-17): Ճշմարիտ հարստությունն Աստծո շնորհած իմաստությունն ու դրա պտուղներն են (Իմմտ. Առակ. Ը 11, 18):

Սուրբգրային սքանչելի վկայություն է Սողոմոնի մասին պատմող հատվածը. նա Տիրոջից խնդրում է ոչ թե հարստություն կամ գանձեր, այլ՝ իմաստություն. «Իմաստությունն տուր քո ծառային, որ նա կարողանա արդարությամբ լսել ու դատել Քո ժողովրդին, խելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը, որովհետեւ ո՞վ կարող է ղեկավարել Քո այս բազմամարդ ժողովրդին... Տիրոջը հաճելի եղավ Սողոմոնի այս խնդրանքը, եւ Տերն ասաց նրան. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ոչ թե կյանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել եւ ո՛չ էլ քեզնից հետո քո նմանը կհայտնվի...» (Գ Թագ. Գ 9-12):

Իրական հարստությունը Աստծո ողորմածությունն ու

շնորհն են, քանզի «Նրանո՛վ է, որ ունենք փրկություն, Նրա արյան միջոցով՝ մեղքերի թողություն, ըստ իր շնորհի մեծության չափի, որ եւ առատացավ մեր մեջ ամենայն իմաստությամբ եւ գիտությամբ» (Եփ. Ա 7-8):

Աստծո սիրուն չեն կարող փոխարինել աշխարհի բոլոր գանձերը, հարստություններն ու վայելքները. «...Աստված, որ առատ է ողորմությամբ, Իր մեծ սիրով, որով սիրեց մեզ, մինչ մեռած էինք մեր մեղքերի մեջ, մեզ կենդանացրեց Քրիստոսով...» (Եփ. Բ 4-5):

Հարստությամբ հպարտացողը հեշտությամբ կարող է կորցնել ողջ ունեցվածքը եւ հայտնվել չքավորության մեջ. Հովհաննես ավետարանիչը զգուշացնում է գոռոզամիտ, երկրային ունայն ինչքով հպարտացող մեծահարուստներին. «...ասում ես. «Հպարտ եմ եւ առավել հպարտացա ու ոչ մի բանի կարոտ չեմ». բայց չգիտես, թե ողորմելի ես դու, թշվառ եւ աղքատ, մերկ եւ կույր...» (Հայտ. Գ 17):

Սա ամենեւին չի նշանակում, որ քրիստոնյան չպետք է ձգտի Նյութական բարեկեցության, սակայն հարստությունը չպետք է ընկալվի որպես գերագույն բարիք եւ դառնա նպատակ: Բարեկեցիկ կյանքը այլ բան է, հարստանալու կույր մոլուցքը՝ բացարձակ այլ: Նրանք, ովքեր բոլոր միջոցներով ու ճանապարհներով ձգտում են հարստանալ՝ հափշտակելով մեկ ուրիշի տանջանքի արդյունքը, թալանելով որբին ու չքավորին, թող մշտապես հիշեն՝ «...ով որ անիրավություն երկնեց, չարիք հղացավ եւ անիրավություն ծնեց, նա փոս փորեց, խորացրեց, հեկեկ ինքն էլ ընկավ այն փոսը, որ նա պատրաստեց» (Սաղմ. Ե 15-16):

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 7

Մեր աչքի առջեւ սերունդներ անցան այդ փորձարարության միջով եւ չկատարեցին հաջորդ քայլը, որովհետեւ եթե նրանց նախորդները բացում էին ժամանակը, իրենք էլ զոհ գնում այդ ժամանակին (Քրոնոսը լափում էր իր զավակներին), ապա նրանց հաջորդները փակեցին այդ ժամանակը եւ դրա հետ մեկտեղ փակեցին արվեստի ամենակարեւոր առաքելության հնարավորությունը՝ հաղորդակցումը, մարդկանց հաղորդակցությունն արվեստի միջոցով, ինչն Աստծուն մոտեցող բարձրագույն հաղորդակցության պես մի բան է: Գրողի ու նկարչի համար փակվեց նաեւ արվեստի սխրանքի հնարավորությունը:

Ժամանակի խոր ու ողբերգական զգացողությունը վերածվեց սոսկ բառի զգացողության, անհատի ու ժամանակի հարաբերությունը վերացավ, եւ բանաստեղծությունը կորցրեց իր դերի ու նշանակության բարձր գիտակցությունը: Գրականությունը հայտնվեց հանրային եւ ազգային գիտակցության ծայրամասում, ուր անգամ ամենահեռավոր գյուղից եկած նաիրցին չի ուզում ոչ միայն բնակվել, այլեւ անգամ շրջագայել, էլ ո՛րը մնաց մեծ արվեստով կրթված ճաշակավոր ընթերցողը:

Արվեստը մեծագույն ազատություն է: Ազատությունն էլ իր ազատ արվեստն է ստեղծում՝ առանց ջղագճիգ ընդդիմության ու խոնարհի հաճկատարության: Գաղափարական սահմանափակումների մեջ քանի՜ սերունդ երազեց ամենապարզ բանը՝ խոսքի ազատություն, քանի՜ սերունդ ակամա մղվեց ընդդիմության եւ կա՛մ զոհ գնաց, կա՛մ արտաքսվեց երկրից:

Միեւնույն ժամանակ քանի՜ սերունդ երգեց վանդակների երգը, այն երկաթաճաղերի ու փշալարերի երգը, որոնց ներ-



սում ինքն էր բանտարկված՝ որպես ստրուկ, որպես գաղափարական ճառի հավելված, որպես շքանշանակիր բանաստեղծ: Մի՞թե այդքան դժվար է տարբերակել հատիկն ու որոմը, կենդանի խոսքն ու մեռած բառակույտը...

2. Պատճենահանված չտեսություն: Հիմա դառնանք մեր մոլորյալներին:

Չարենցի «Նոր» դեմքը բացահայտելու կոչված վարկաբեկված եւ գռեկաբարո «Ինքնագիր»-ը (2008, թիվ 5) իր բարոյախոսի անունից բարբառում է. «Պրոֆեսոր Ռասելը, հրապարակելով Չարենցի անտիպները, բացում է բանաստեղծի մեկ այլ

մի ժամանակ, որովհետեւ բոլոր ժամանակների մեջ էլ մի քանի Չարենց է եղել՝ հեղափոխականի կողքին ազգայնականն էր, ողբերգականի կողքին՝ զգայավառը:

Մնում է, որ Չարենցը չմասնատվի, չորակվի հակասական, այլ ընկալվի իր բոլոր դրսեւորումների ամբողջությամբ: Մինչդեռ իրենց սեռական խանգարումներով (շեղումներով) կյանքն ապակառող մարդկանց Չարենցին ուղղված ստոր հալացքը միայն անպատկառ երջանկությամբ կարող է ծաղրանքով գրել. «Ցեղասպանությունը իբրեւ տատիկի հնացած սնդուկից հանված, գյումրվա բար-

բառով սարսափ-հեքիաթ...», «ցեղասպանության թոռ» («Ինքնագիր», նշված համարը, էջ 4): Այսքանից հետո թուրքից էլ ի՞նչ ենք պահանջում, երբ թուրքը մեր մեջ է: Եվ այս բարոյախոսը կանանց ամառային դասընթացներ է վարում (workshop)՝ ապականելու դեռեւս մաքուր մնացած հոգիները: Սա է, ինչի մասին ժողովրդական խոսքը բարբառում է՝ գավառից եկած չտեսները ա՛յն, ինչ չտեսան պատից կախ, տեսան ճակատից կախ...

Շարունակելի

Դավիթ ԳՍՄՊՐՅԱՆ
Բանասիրական գիտ.
դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 51717

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 17.11.2017թ.

Տպաքանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ